ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1634

16.05.2016թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սույն թվականի մայիս ամսին այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ, արձանագրել է, որ

Թերություններ՝

1. Ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր փոշոտ վիճակում:
2. 17-րդ խցի ջրի ծորակը չէր աշխատում:
3. Դիտորդական խմբի նախորդ գրությանը ի պատասխան մեկնաբանություն էր տրել, որ Երևանի ՁՊՎ-ում առկա է մշտական տաք ջուր, դա այդպես չէ: Դիտորդական խումբը արձանագրեց, ըստ հերթապահ ոստիկանի՝ ջուրը այցելության օրը ժամը 09.30-ից միացված էր, որպեսզի տաքանա, ժամը 12.10-ի դրությամբ, երբ Դիտորդական խումբը ավարտել էր իր մոնիթորինգը՝ ջուրը չէր տաքացել, ինչպես կար, այդպես էլ սառը մնացել էր: Հետևություն, որ նախորդ գրությամբ Դիտորդական խմբի կողմից նշված լոգանք չտրամադրելը, հանարավոր է, որ կապված էր այդ հիմնախնդրի հետ, որը հերքվել էր:

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏՐՈՒ № 2440
17 05 2016 թ.

Խախտումներ՝

1. <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում հերթական համարները գրված են խախտումներով. օրինակ՝ N368-ից հետո լրացված է N269 և այնուհետև շարունակվում է N269-ից:

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60,
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս՝ (+374 10) 52 81 87
E-mail: info@policemonitoring.org

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՏՐՈՒ ԹԻՎ 3172
«16» 05 2016 թ.

2. <<Ձերբակալված անձանց հաշվառման>> գրանցամատյանում գրառումները կատարվում են ոչ պատշաճ: Օրինակ՝ N220, N221, N222 համարների գրառումները: Ապրիլ և մայիս ամիսներին ձերբակալված անձանց կալանավորման օրերը նշված են մարտ ամսով:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրածը և տալ մեկնաբանություն:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60, Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-2131 <<10>> 06 2016թ.

Ձեր 16.05.2016թ. թիվ 2621/1634 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ մայիս ամսին ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ կատարած այցելության ընթացքում արձանագրված թերություններն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Երևան քաղաքի վարչության կողմից կատարվել է ծառայողական քննություն, որի արդյունքներով տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

Ծառայողական քննության ընթացքում հիմնավորվել է դիտորդների խմբի կողմից արձանագրված հանգամանքներն, ինչի համար ՁՊՎ-ի մի խումբ ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

Միաժամանակ հայտնվում է, որ նշված թերությունները արդեն իսկ վերացվել են և ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ղեկավարության կողմից ՁՊՎ-ի վարչակազմին հանձնարարական է տրվել հատուկ ուշադրություն դարձնել ՁՊՎ-ի տեխնիկական սարքավորումների անխափան աշխատանքի, սանիտարահիգիենիկ վիճակի ապահովման, ինչպես նաև ՁՊՎ-ներում գործածվող գրանցամատյանների ու ձևաթղթերի ճիշտ և առանց ջնջումների վարման կարգի վրա:

ՀՀ ոստիկանության շտաբ